

«ՀՈԳԻՈՅ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՆՄԵՀ ՕՐԸ (ԱՊՐԵԼԻ 17-Ը)»

Ազգերն իրենց պատմական կեանքի ընթացքում ունենում են օրեր, որոնք կազմում են նրանց վերածնունթեան դարագլուխ, որոնցից սկսւում է նոր կեանք, նոր գործունէութիւն, որոնք փչրում են հնադարեան կաշկանդող ծանր շղթաներն ու ազատ լայն բացում ազատութեան ծարաւ հոգու թևերն ու շարժուելու կարօտ բազուկները։ Ռուսաստանում այդպիսի նշանաւոր օրերիցն էր 1861 թուի Փետրուարի 19-ը, երբ յայտարարուեց ստրուկների ազատութիւնը և քսան միլիոնից աւելի մարդիկ դուրս եկան կամազուրկ, անասնութեան հասած վիճակից, ուրիշի համար ապրելու և աշխատելու պարտաւորութիւնից և դարձան իրենց հայրենիքի ազատ քաղաքացիներ։ Այդ տեսակ օրերիցն էր ներկայ տարուայ փետրուարի 19ը, երբ Թագաւոր Կայսրը բարեհաճեց բարձրագոյն հրամայել, որ օրէնսդրական աշխատանքների համար հրաւիրուին ժողովրդից ընտրուած ներկայացուցիչներ և նրանք քննեն ու մշակեն երկրի համար հարկաւոր օրէնքները ժամանակի պահանջների համեմատ։ Բայց այդ երկու նշանաւոր օրերն էլ վերաբերում էին մարդու արտաքին՝ եթէ կարելի է այսպէս ասել, ֆիզիքական ազատութեան։ Դրանց գերադանցեց այս տարուայ ապրիլի 17ը, որը կը կոչուի Ռուսաստանի հոգեկան ազատութեան տօն և կը տօնուի ամենայն հանդիսաւորութեամբ։ Այդ օրը Թագաւոր Կայսրը բարեհաճեց յայտարարել ի լուր աշխարհի և յուրախութիւն իւր բոլոր հպատակների, որ այսուհետեւ հաւատարիմ հպատակութեան համար չի պահանջուում կաշկանդուած և որոշ չքնակի մէջ սեխմուած խիղճ, որ ազատ խղճով մարդիկ միայն կարող են ազատակամ հպատակ լինել և հաւատարիմ ծառայել այն հայրենիքին, որը պայման չի դնում որոշ ձևի աստուածապաշտութիւն, որոշ ծէս, ձևականութիւն և չի բռնանում մարդու խղճի վրայ։

Անշուշտ այդ օրը անխտիր ազատ շունչ քաշեց ընդարձակ Ռուսիայի 140.000,000 ազգաբնակչութիւնը և նրա կրօնքից ընկաւ դարերի ընթացքում հոգին ճնշող քարը: Այդ օրը յայտարարուեց խղճի ազատութիւն, թէ և ոչ առանց փոշրիկ սահմանափակումների, բայց և այնպէս դա մի հսկայական քայլ էր դէպի առաջ, լուսոյ մի ահագին հոսանք, որը եկաւ թափանցելու ընդարձակ երկրի բազմամիլիոն ժողովուրդների խաւար կեանքի մէջ: Այսուհետեւ պարտադիր չէ, որ խառն ամուսնութիւնից ծնուած զաւակներն անպատճառ օրթոդոքս լինին, պրաւօսլաւ մարդը այլևս կաշկանդուած չէ բռնի իւր դաւանութեան մէջ մեռնելու: Օտարազգին ստիպուած չէ հաւատարիմ երեւալու, պաշտօն ստանալու, ուրիշի հողաբանժին տիրելու և այլ բաների համար կրօնափոխ լինելու, հեռանալու իրեն սիրած կրօնից և մոլորութեամբ, շահախնդրութեամբ կամ խաբէութեամբ հեռանալուց յետոյ՝ հայրենի եկեղեցու ծոցը վերադառնալու իրաւունքից զուրկ մնալու: Օտարազգի հետ ամուսնացող մարդը հարկադրուած չէ օտարադաւան երեխաներ ունենալու և խորթ աչքով նայելու նրանց: Այսուհետեւ ընտանեկան յարկի տակ սիրոյ հակակշիռ չը պէտք է լինի կրօնական վէճն ու խարութիւնը, մինը իրաւատէր և միւսը իրաւազուրկ չը պէտք է լինին, այլադաւան եկեղեցիների կառուցման համար գոյութիւն ունեցող կաշկանդիչ ձեւակաւնութիւնները վերացուած են և ազատուած է հարիւր քառասուն միլիոն մարդկանց խիղճը: Խալֆալու, Շահ-րիար և Կոդը, Զաքեարիու, Քեափանակ և Աղին չը պէտք է տեղի ունենան սոսկ խօստումների և արդարութեան հակառակ ընթացքի շնորհիւ: Սխալ հաշիւներով կրօնափոխ եղածը՝ ամենափոքր խղճի խայթ զգալուն պէս՝ ազատ է վերադառնալու իւր նախկին դաւանութեան և ոչ ոք նրան արգելք հանդիսանալ չի կարող:

Ծիշտ է, օրէնքը ունի նաև իւր պակասաւոր կողմերը.— օրինակ խառն ամուսնութեանց դէպքում զաւակների դաւանութեան որոշ լինելու համար հարկաւոր է ամուս-

նացողներից մէկն ու մէկի դաւանափոխութիւնը, ազատութիւն չի տրուած մահմէդականներին և հրէաներին ևս այլոց հաւասար, բայց և այնպէս ապրիլի 17-ին կատարուած է այնպիսի հսկայական մի թռիչք, մարդկանց հոգուց վերացրած են այնպիսի ծանր շղաթաներ, որ մասնակի պակասաւոր կողմերը կորցնում են իրենց նշանակութիւնը և նոյնիսկ աչքի չեն ընկնում՝ երբէք չը նսեմացնելով այդ պատմական մեծ օրուայ լուսաւոր նշանակութիւնը։ Եթէ դրա վրայ աւելացնենք նաև մայիսի 1-ին տուած Հրովարտակը, որով լեհացիներին իրաւունք տրուեց մայրենի լեզուով անցնելու միդասեան, երկդասեան և չորս դասարանեան քաղաքային դպրոցների դասընթացները, պէտք է յուսանք, որ նոյն իրաւունքը կը տրուի նաև բոլոր այլազգիներին և կսկսուի նոր կեանք և նոր գործունէութիւն նաև մեզ՝ շատ սև օրեր տեսնողներին համար և անդորրութիւն կը գտնի մեր անարդարութեամբ վրդովուած խիղճն ու հոգին, որը տգիտութեան խաւարի, հոգեկան ստրկութեան և ատելութեան քարոզի շնորհիւ, սարսափահար հանդիսատես է բարբարոսական դժողոխային պատկերների և արիւնհեղութեան դարաւոր դրացիների և նոյն երկրի զաւակների մէջ։

Ս. Ճ. Վ. Մ.

